

միտիթարութեան կարօտ ժաղովուրդը չայտատանեաց եկեղեցիների բեմից քարոզների է սպասում մենք աւելի լաւ նուէր կարող չենք տալ մեր քաշանաներին քանի եթէ Սպէօրջրնի քարոզներից քանի մի ծաղկաքաղ Քրիստոնեայ աշխարհին ամենուրեք ծանօթեն նրա քարոզները, որոնք բազմաթիւ լեզուներով թարգմանուած են. յոյս ունենալով որ Սպէօրջրնի քարոզներից շուտով հայերէն ևս կը թարգմանուին մենք առայժմ այս ծաղկաքաղներով ենք գոհանում:

## Ա.

Աշխարհային զքոսանք:

Մի քանիսը ձեզնից քրիստոնեայ չեն, այլ աշխարհի որդիք. սակայն այգու զրանք երջանիկ չեն: Եթէ գուք կարծում էք աշխարհային լինելով զուարձութիւններ կը գըտնէք, ես ձեզ կը կամենայի մի անձի օրինակն լիշեցնել որ այդ մասին աշխարհս կատարելապէս փորձել է. դա է Սոզոմոնի իմաստունը, որ մարգուս սրտի ցանկացած ամէն հարստութիւններն և մի գլխի մէջ ամփոփուել կարող բոլոր իմաստութիւնն ունէր, բայց այգու ամենայնիւ թէ աղքատ էր և թէ տիմար: Նա աշխարհու տակն ու վրայ արաւ զուարձութիւն վիճուելով, բայց էլի չգըտաւ: Մի առ ժամանակ նա իւր խելքն ու միտքը ճարտարապետութեան տուաւ, կառոյց հրաշալի պալատներ, բայց երբ այդ ամէնը շինեց վերջացրեց: առաց նաև ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է: Առաւ նա իւր բոլոր գրքերն ուսումնասիրեց եռանդով, բայց երկար ժամանակ դրանց վրայ գլուխ կոտրելուց յետոյասաց: «Շատ զրքեր յօրինելը վերջ շունի, եւ շատ ուսանելն յոգնեցնուամ՝ է մարմինը»: Նա փորձեց զուարձանալու երգիշներով և երգչուհիներով և թագաւորներին մատչելի զրօսանքներով, բայց երբ այս ձեռով մարդկային ընութեան ծայրագոյն սահմանի չափ զուարձացել էր, առաց ունայնութիւնը ամենայն ինչ ընդունական յայլը: Դու կը նունես այն մանկանը, որ իր տունը շինուամ է աւաղից ծովի ափին. մակընթացութիւնը գալիս է,

Ես նա ամէն ինչ փորձեց և աշխարհային զրօսանքներն այնպէս խարուսիկ գտաւ, որպէս Սոդոմի խնձորները, որ տեսքով սիրուն են, բայց ձեռք զիազելուն պէս մսիսիր են դասնում: Ոչ մի քանի երկնքի տակ և ոչինչ ի վեր քան զերկինս կարող է մարդուս երջանկացնել: ով առանց Աստուծոյ է, թող որոնէ ինչքան կ'ուզէ: Առանց Աստուծոյ կարող էք գտօնիք ստեղծել: սակայն երկինք ոչ երբէք, արէք ինչ որ կ'ուզէք: Խնդրում եմ քեզ, ով երջանիկու երբ յոգնել ես աշխարհայց և բոլոր բաներից զղուած ես, եթէ գու մի չոր տերեւ ես, թէպէտե ոչ քառասուն տարեկանից վեր, խորհիր որ մի տեղ կայ: ուր քո սակարթը կրկին կարող է կանաչել: Եթէ գու կամենաս Տիրոջը միշտ աշքից առաջն ունենալ, այն ժամանակ միշտ խաղաղութիւն կը գտնես նորանով:

Բայց թերեւս կարիք կայ, որ ես ձեզնից նրանց ականջին խօսեմ: որոնք կատարելապէս երջանիկ են աշխարհիս վրայ: Խոստովանում եմ: ես չեմ նախանձում ձեզ, սակայն ես սիրով եմ լսում: երբ գուք միշտ կրկնում էք և պատմում թէ որպիսի երջանկութիւն է ընձեռում աշխարհս:

Ցեսէք սակայն՝ թէ որպիսի անկայուն սիւների վրայ են կանգնած ձեր այդ զառանցական ամրոցները: Դուք առողջ էք, այս է ահա ձեր երջանկութեան հիմքը, ձեր մարմնու գործարանները կարգին են, և գուք զուարթ էք: Բայց զիցուք թէ դուք հիւանդացաք, ինչ կը լինի այն ժամանակ: Կամ դիցուք թէ ձեր այդ սակաւ սպիտակ մազերը բազմանային շուտով, ուր կ'երթայ ձեր զուարձութիւնը: Կամ թէ ձեր հարստութիւնը թե առնի և թուզի: այն ժամանակն ինչ պէտք ունիք: Կամ եթէ գուք Տիրոջ գտատատանի առաջ կանգնելու լինիք, հազար ժամանակը: Ով մարդ, թող այդ տկարհիմունքը, դա չարժէ, որ զրայ վրայ դնես քո յափառենական յայլը: Դու կը նունես այն մանկանը, որ իր տունը շինուամ է աւաղից ծովի ափին. մակընթացութիւնը գալիս է,

ով մասնութիւն թող աւագն ու փախիքը աղիք-  
ներից Ահա ժայռը, որի վրայ դու ծանր  
քարերով քեզ համար յանիտենական տուն  
կարող են կանգնել երջանկութեան մի գդեակ,  
որ երբէք չի կործանուիլ: Գնա և մերձեցիք  
Տեան:

6.

## Անառակ որդիք.

Զարմանալիք է որ մեր ժամանակներում  
անառակ որդիքը շատացել են, որ քրիստո-  
նեաց ընտանիքներում՝ առուներ կան, որ  
սիրով չեն լօւսում: Ապէօրջընը գիտէ այդ և  
ցցց է տալիս զրա տեղը:

Ունիքը արդեօք մի որդի, որ ձեր տու-  
նը թողել հեռացել է: Արդեօք նա մի կա-  
մակոր, վշացած երիտասարդ է, որ չէ կա-  
րողացել գիմնանալ քրիստոնեայ ընտանիքի  
կարգ ու կանոնին: Յաւալի է, շատ յաւալի  
է այդ, սակայն մի վհատիք, յուսահատու-  
թեամբ մը մոտածէք նրա մասին: Դուք քը  
գիտէք թէ ուր է նա, բայց Տէրը գիտէ:  
գուք նրան չէք կարող հետևել սակայն Աս-  
տուծոյ Հոգին կարող է այդ: Զինի նա  
ուղի է Ընկել գէպի Զինաստանի ափունքը,  
գէպի Շանդայ: Ա՛յ, երևի այստեղ մի Պօ-  
ղոս կը լինի, որ նրա դարձնելու ուղիղ մի-  
ջոցները կը գտնէ: և որովհետեւ այդ Պօղո-  
սը չկայ Անգլիայում, ուստի ձեր որդին  
այնտեղ է գնացել: Այս պատճառով Աստ-  
ուած թոյլ է տալիս որ շատերը իրենց յա-  
մասութեամբ հեռանան, որպէսզի նա դուր-  
սըն այն շնորհաց արքանանայ, որ պիտի  
ներգործեն նրա երջանկութեան վրայ, որ  
շատ ծովագնացներ վայրենի, անհոգ: Աս-  
տուծուց, Քրիստոսից զուրկի են եղել և ի  
վախճանի գտնուել են օտարութեան մէջ,  
մի որեւէ հիւանդանոյում: Ա՛յ, եթէ նրա  
մայրը գիտենար, որ նա գեղին տենդով տա-  
ռապում է, ի՞նչըսն կը արտաձեռ նա, որպէս-  
հետեւ պիտի հետեցնէ, որ իր որդին Հա-  
ւաննայում և կամ ոյլուր պիտի վախճա-  
նի և երբէք պիտի ցտանայ: Սակայն չէնց

այդ հիւանդանոցումն է, որ Տէրը կամե-  
նում է նրան այցելի ու դու զգիտես,  
ով խանդակաթ մայր, որու զգիտես որ մի  
երիտասարդի պատոհած մեծագոյն չարքը  
յաճախ ամենամեծ բարիբն է նրա համար:  
Երիտասարդ աղջուականներին և հարսափ  
որդիկանց ձիարշաւներին և այլ զրօնանքնե-  
րին մասնակցելիս տեսնելով երբեմն մուա-  
ծել եմ «Արգարեն», այս մի սարսափելի, վառ  
ըան է, սակայն դա կարող է նոյնպէս և  
բարիբ լինել, երբ դրանք իրենց զրամները  
վատնեն կարեցածներին չափ շուտով, և  
ապա, երբ մուրացկանութեան համեն, պի-  
տի նմանին առակի մէջ յիշուած երիտասար-  
դին, որ իւր հօրից բաժանուեց: Երբ նա ա-  
մենայն ինչ սպասեց, մեծ սով ընկառ այն  
երկրում և նա սկսու նուազել այն ժամա-  
նակ մոտածեց նա: Ովեր կենամ և հօրս մօտ  
երթամու: Թերեւս այն հիւանդութիւնը, որ  
յաջորդում է անառակութեան, թերեւս աղ-  
քատութիւնը, որ մի զրաշտորուած մարդու  
նման շրայլութիւնից և անառակութիւնից  
յետոյ գալիս է, ուշըն է միայն մի այլ ձեռով  
որ ուզարկուած է մեղաւորին ստիպելու խելքը  
գլուխն հաւաքելու, իւր ճանապարհներն ընտ-  
րելու և սպրմած (Աստուծուն որտնելու:

95

ՀԱՂԱԼԱՆ ԴԱՐՄԱՆԸ.

« Զարք բարեկիսխելու, ինչպէս անկեալ գը-  
լորեալին ուրքի կանգնեցնելու համար շատ  
միջոցներ են փորձում աշխարհիս երեսին  
և այդ ամենին ինչ չափով դրանք հաստա-  
տուն հիմք ունին յաջող ելք ենք մաղթում  
Սակայն լաւ պահցեք ձեր մաքում հետե-  
եալ խօսքերը. որպէս զի արբեցողը կատա-  
րելապէս բարեկիսխուի, պէտք է մի նոր սիրո  
ստանոյ, անհառակին ճշմարտապէս ոտքի կանգ-  
նելու համար պէտք է մի նորոգուած խոհա-  
կանութիւն: Անկեալ կանայք երբեք չեն  
սրբութիւն վարակիչ՝ ախտերի մասին դրտած  
օրէնքներով . . . Այդպիսի օրէնքներով կա-  
նացիութիւնը աւելի եւս խորագոյն անգունդը

կը գլորուի: Անառակը պէտք է որբուի ֆրկչի արիւնով այլ կերպ նա չէ կարող մաքրուիլ: Ըս- կերութեան ստորին կարգը երբէք այլ կերպ առաքինութեան, չափաւորութեան և մաքր- ութեան լոյսը չի հանուիլ առանց Քրիստո- սի և Նորա աւետարանի: Թող ուրիշները գործեն ինչ կամենան բայց քառ լիցի որ ես բացի Ցիսուսի Քրիստոսի խաջից ալ բանով պարծենամ: Ես տեսնում եմ որ քանի մի եղբայրներ մղաւթեան ծառից ճիւղերը կա- մենում են փայտէ սղոցով կարել մինչ աւ- ետարանը տապարը զնումէ ծառի արմա- տին չարութեան ամբողջ անտառում: և երբ աւետարանը մեր որտերում իւր խկական տեղն է գրաւում: այն ժամանակ կացինը կարառումէ բոլոր թունաւոր ծառերը (Արա- նաւո) միանգամից: և զրանց փոխանակ ա- նում են եղենիներ փեկոններ և տօսախ- ներ: որպէս զի զարդարեն մեր Տիրոջ տան փառաւորութիւնը:

Աւետարանը դեռ չէ կարուսել իւր հին զօրութիւնը: այլ ընդհակառակն ուր քարո- զումէ հաւատով այնտեղ դեռ ևս յաղթող է ճակատամարտներում: Տուէք մեզ աղատ ասպարէզ: մի բաց Աստուածաշունչ և մի լուրջ լեզու: և ժողովուրդը դեռ ևս կը շարժուի և ամբոխը կ'երկրպագէ մեր արքա- յին: Մնք տեսել ենք մի քանիսին: որոնց մէջ մեղսական սովորութիւնները խոր արմատ էին ձգել: բայց որոնք իրենց հին մեղքերից բաժանուեցան: Նայեցէք: ահա զօրաւոր շր- նորհաց հրաշք: Մեղաւորն իւր մեղքերի մէջ ծերացել է: նա նման է մի կազնու: որ հա- զարաւոր արմատներ է ձգել երկրի մէջ: Այդ կաղնին արմատահան անել և մի այլ տեղ տնկելն անչնարին է թուում: աւելի զիւրին կը լինէր այդ ծառը կարելը: սակայն Աստուծոյ հզօր ձեռքը բռնել է այդ ծառից: Նրան թափահարելով անց է կացրել՝ մեղքի հանաչողութեան միջոցով և վերջապէս խել- քի բերելով իւր խկ արմատներով տեղահան է արել այնպէս որ այն տեղը որ առաջ նրան ճանաչումէր: այլեւ չէ ճանաչում: Տէ-

րը կարող է լեռները ճեղքել և ծովը հեր- ձանել ուստի և նա կարող է մարդկանց ևս իրենց սիրելի դպրձած մեղքերից բա- ժանել և ուսուցանել որ աւելի սիրով կար- ըրեն իրենց աջ ձեռքը: հանեն իրենց աջ աչ- քը: քան թէ մեղքի մէջ կորնչեն: Արդարեւ, ո՞վ Տէր: հզօր է քո բաժակդ:

Ի.

Գիտութիւն եւ հաւատ.

Հայոց աղքատիկ գրականութեան մէջ յայտնի մանկական գրքերի հեղինակ դոկտոր Հովմանը, որին մանկանց բարեկամ մակա- նունն են տուել: մի մտահարուս գիտա- կան և հաւատացեալ քրիստոնեայ էր. նա իւր համար տապանագիր է ընտրել հեռե- եալ խօսքը. ճշմարիտ գիտութիւնը գէպի հաւատն է առաջնորդում: Մեր գորը գի- տութիւններով և կրթութեամբ ճխացած է: զուսաւորութիւն բառը շատերին է գր- րաւում և մազնիսի նման գէպի ինքը ճը- գում: Բայց չենք կարող չնոստովանել: որ շատերի համար իրենց գիտութիւնը նրանց աչքերը ծածկագ մի վարագոյր է: որ արգե- լումէ նրանց հաւատոյ աշխարհը տեսնելու: Սպէօրջըն այսպէս է խօսում մի անձի հետ: որին գիտութիւնն և իւր ստացած բարձր կրթութիւնը արգելք է լինում հաւատալու: Տիրոջ մի գտակիր մարդկային գատողու- թեամբ: Խմացիր: ո՞վ մարդ: որ նա մի վր- տակ չէ: որ կարող լինիս նրա խորութիւնը չափել և ոյժը հաշուել նա մի անյատակ և անծայր ծով է: որի մէջ բոլոր քո մըտ- քերդ կը խորասուզուին: եթէ ձեռնարկեն այն չափելու: Մտածիր հետեւալի մասին: եթէ կամենաւմ ես աւետարանի վրայ գա- տասան կարգալ: շատ շուտով կը մոլորուիս: որովհետեւ քո գնահատութեան եղանակը ընականաբար սխալ պիտի լինի: քանի որ գի- տես և ինչի հմտւա ես: մինչ Աստուած ան- վերջ է և ի վեր քան զամենայն: ինչ որ զու գիտես և հասկանալ կարող ես: Ապա ո՞վ

սիրելի, թոյլ տաւր քեզ լիշեցնեմ, որ գու օտար ես աւետարանից, և որ գու այդ հենց իւր տարօրինակութեան պատճառով կարող ես դատապարտել որովհետեւ պարզ է, որ այդ բանում շատերն են մոլորւել Հրեաները, որոնք Փրկիլ ժամանակի էին տարրում և տեղին եղած քարոզիչներից ամենամեծին, սակայն նրանք չհասկացան նրան: Դրա պատճառը քարոզի մթութիւնը չէր, որովհետեւ գեռես ոչ մի մարդ այնպէս չէր խօսել, ինչպէս սառ բայց էլի սխալ հասկացան նրանք ամենայն ինչ, որ նա ասումէր: Դրանցից մի քանիսը հանճարեղ մարդիկ էին և լաւ կրթուած: Մանաւանդ մէկը կար, որ գլխաւորներիցն էր, մի ուսեալ գիտնական հրէից մէջ՝ նա էլ այդ բաները չհասկացաւ: և երբ Փրկիլը նրան ասաց, ոգուք պիտի նորից ծնուռէր, այդ խօսքը բառացի հասկացաւ, նա չկարոզացաւ այն խորհրդաւոր փոխակերպութիւնն հասկանալ, որ Փրկիլը կամենում էր նկարագրել Արդ, եթէ նկողիմոսը և նրա նման շատերը չգիտէին այդ հնարաւոր չէ, արդեօք որ դու էլ այդ խորհուրդն ըմբռնած ցինիս և մինչեւ այժմ այդ խորհրդին չտիրացած: Թերեւս գու մի շատ ուսեալ և առանձին ձիրքերի և տաղանդների տէր մարդ ես: Սիրեցեազդ իմ: եթէ կան այնպիսիք, որոնք աւետարանի ճշմարիտ իմաստը չհասկանալու վտանգի մէջ են, դրանք հենց այնպիսիքն են, ինչպէս գու ինքու Տարօրինակ է, կասես գու, որ ես այս նկատողութիւնն անումեմ: սակայն դո հրմնուած է իրողութիւնների վրայ: Այս աշխարհի գիտուններից շատերը չեն, որ Քըրիստոսիցն են ուսանում... Ահ, ճշմարիտ էր ս. Յգոստինոսի նկատողութիւնը որ ասում էր: մինչդեռ գիտունները իսարիսափում են մղուկը (դրան բռնելու տեղը) գտնելու, պարզամիտներն ու աղքատները մտել էին արդէն արքայութիւնն: Որտի պարզութիւնն աւելի է օգնում աւետարանն հասկանալու, քան թէ մարդի կրթութիւնը: Ու սանելու պատրաստ լինելն աւելի լաւ ունա-

կութիւն է: քան թէ ուսուցանել կարողանալը: Գոյ աստուածաբանութեան վարդապետի ասահիմանդ խոցնութան կը լինի քեզ աստուածաբանութիւնը հասկանալու: և դասկան գիտնական գիտնականութեան աստիճանով, որ ձեռք ես բերել աւելի կը գիտուարացնէ այն հասկանալու: ինչ որ խեղճին մէկը, թէպէտ ետք գիտութեան մէջ թագուած, բերան գիտէ: Որովհետեւ այս ոյսպէս է, ուստի ես քեզ չեմ նախատում: ով սիրեցեալդ իմ: երբ ասում եմ: որ գուցէ ցարդ աւետարանի վերաբերութեամբ մղորութեան մէջ ես եղել և որ գու այս պատճառով եթէ երբ և է քեզ այդ ասուի, լաւ կ'անես: որ նրան արժանի ունկնդրութիւն ցոյց տաս և ջրխոսես այն պատճառով, որ քեզ նորանշան է թուում:

Թարգմ. գերմ. Ծ. Ք.



ՆՇԽԱՐԵՆԵՐ ԱՄԵՆԱՎՃԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ՀԱՅՐԵՐԻ ԳՐԱՒԾՆԵՐԻՑ.

Արարատի անցեալ համարի հետ հրատարակած յաւելուածի մասին խօսելով մեկը առանձին ուշադրութիւն հրաւիրեցինք Հիպաղողիտին ընծայուած վկայութիւնների վերայ: Ստորև յառաջ ենք ընթրում կ մանր հաստուածներ նոյն Հիպաղողիտի անսուամբ: որոնք հայերէն առաջին անգամ են լոյս տեսնուած: իսկ մէտ արդեօք նորա համապատասխան են լինագրի լեզուով կամ ուրիշ մի թարգմանութեամբ մինչեւ այժմ եղած որ և է հրատարակութեան այդ որոշելու համար պահասուած են մեզ ազդիւններ: Հիպաղողիտ առաքելական ամենանշանաւոր հայերից մէկի՝ ս. Իրենէոսի (մեր ձեռագրների և տօնացցցի մէջ՝ նրանու հետեւող առաքելոց) աշակերտն էր և իրբե երէց, Հոռոմում Գ. գարի սկզբին անցաւ մի կուսակցութեան զլուիւ: որ Զեփիւրին (199 թ.-217 թ.) և Կալլիս (217-222) պատերի հայակակ պահանջում էր խիստ վարուել քրիստոնեութիւնն ուրացողների և ծանր մեղքերի, յատկապէս անառակրութեան մէջ ընկնողների հետ, բանագրելով նոցա և ոչ մի պայմանի ներբռյ կրկին եկեղեցւոյ գիրկը ըլուգունելով, Այս վէճը, որ եկեղեցւոյ ուրիշ մասերի մէջ ևս յարուցուել է և Գ. գարու զինաւոր աղանդների պատճառ եղել: